

2 Ո. 20 Կ.

ՎՐԱՑԱՆԻ ԼՈՒԺՈՂԿՈՐՅՑ - ՈՒՍ. ՄԵԹ. ԱԿԱДЕՄԻ

ԵՐԱԳՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒՏԻ
ՎՈՏՈԽԵԴԵՆԻ
Ակադեմիա Խան
СССР

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

(ԱԳՐՈ-ԶՈՈԳԻՑԵԼԵՔՆԵՐ)

ԿՈԼԵՐԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համամիուր. Կոմիտսի (թ) 1931 թ.
5 հոկտեմբերի վարուման հիման
վրա պայմարենք Մարքս-Լենինյան
պոլիտիկական դպրոցի համար

1932

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏՑՐԱՏ

375

Վ-99

8120-10

ՀՐԱՄԱՆԻ ԼՈՒՓԱՎԿՈՒԹԻՅ - ԱԽ. ՄԵՐ. ԱԿԱԴՈ

A 457
375
Կ-99

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԵՐԱԳՐՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

(ԱԳՐ-ԶՈՈԳԻՏԵԼԻՔՆԵՐ)

ԿՈԼԵՐԻՑ ԴՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համամիուր. Կոմկուսի (թ) 1931 թ.
5 հոկտեմբերի վարուժան հիման
վրա պայմանագրի Մարքս-Լենինյան
պոլիտիկական դպրոցի համար

ՎՐԱՍՏԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
1932

ՊԵՏՐՈՎ

12 AUG 2013

53 781

Ստիլիստներ՝ Աղքաբյան Կ., Նորայր

Մըսագրող և տէխ. դեկավար՝ Գ. Բաբուրյան

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Գյուղաճնեխառնության ծրագրների նկատմամբ

Կոլյերիտ գպրոցների անցյալ ուս. տարվա գյուղատնտեսության ծրագրները վոչ մի սիստեմի տակ չեյին դրված։ Այդ ծրագրներում վոչ միասնություն կար, վոչ ել սիստեմատիկականություն։ Կարեռագույն բնագավառներից և հարցերից շատերն անուշագրության եյին մատնված։ Ծրագրներն այնպիս եյին կառուցված, վոր գյուղատնտեսության առանձին մասնագիտական բնագավառների ծանոթությունը տեղի յեր ունենում առանց նախնական պատրաստության։

Գյուղատնտեսության դասավանդումը կոլյերիտ գպրոցներում չի յենթագրում աշակ. մասնագիտացում այս կամ այն բնագավառում—այդ առարկայի դասավանդումը գպրոցի պոլիտեխնիկացման մի մասն և հանդիսանում և որգանապես կապված և ցեղակից տռարկաների (բնագիտության, քիմիայի, աշխարհագրության, ֆիզիկայի և այլն) հետ։

Ծրագրներում տրված «Գյուղատնտեսության հիմունքները»-ն «Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը» պետք են դասավանդվեն առաջին խմբում, իսկ յերկրորդ և յերրորդ խմբում ուսումնամիբում և այս կամ այն ուսունի մշակույթը, որինակ թեյի մշակույթը թեյի ուսուններում, խաղողի մշակույթը գինեգործական ուսուններում և այլն։ Այսպիսով գպրոցը, գյուղատնտեսության դասագան բնագավառների ընդհանուր ուսումնամիբության հետ միասին, ավելի հիմնավորապես ուսումնամիբում և մի կամ յերկու բնագավառ՝ համապատասխան տնտեսական պրոֆելին (իր ուսունի մասնագիտացման) և վերջապես ու-



Ստիլիստներ՝ 1-ին տպարան, Պետականութիւն փող. 91:

սումասիրում և խորհունտեսության և կոլտնտեսության կազմակերպությունը:

Ծրագրներում առանձին տեղ և տրված գյուղատնտեսության մեքենացմանը և եկատրիփիկացիային, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ծրագրին, բայց այդ առարկան չսկսվ և առանձին և ինքնուրույն կերպով ուսումնասիրվի, մեքենաներն ու գործիքներն անհրաժեշտ և ուսումնասիրել բոլոր մշակույթների և բնագավառների մշակման ժամանակ:

Ուստի և այս կամ այն բնագավառի ծրագրներում գյուղատնտեսական մեքենաները միայն մատնանշվում են համապատասխան տեղերում: Դրանց մանրամասն ուսումնասիրության համար անհրաժեշտ և ղեկավարվել մեքենաների և գործիքների վերաբերյալ առանձին ծրագրով:

Ծրագրներում նյութերը դասավորված են համաձայն սիստեմատիկ դասընթացի: Բայց այդ չի նշանակում, թե առարկան պետք և ուսումնասիրել սեղոնից անկախ: Ընդհակառակն, աշխատանքային ծրագրներ կազմելիս գլխավոր ուշադրությունը դարձնում ենք նյութի սեղոնային դասավորության վրա, վորպեսզի այդ ճանապարհով մաքսիմալ չափով թեորիան կապվի պրակտիկայի հետ և ավելի մեծ հնարավորություն տրվի զննական ուսուցմանը, դիտողականությանը և անմիջական աշխատանքին արտադրության մեջ: Այդ նպատակով զպրոցական հողամասը (գյուղատնտեսական) պետք և դպրոցի լարորատորիան հանդիսանա՝ բնագիտական հարցերն ուսումնասիրելու համար: Անհրաժեշտ և նմանապես դիտողություններ կատարել մոտակա խորհունտեսության կամ կոլտնտեսության կատարած աշխատանքի վրա և առաջակերտությանը դիտածների դիտական հիմնավորումը:

Անհրաժեշտ և նշել, վոր մի քանի զպրոցներում փորձել են արել վերացնելու դպրոցական փորձնական հողամասերը և ցույց են տվել այդ հողամասերը կոլտնտեսություններին միացնելու միտուներ, վորոնք բղխում են զպրոցի մահացման հակալենինյան թեորիայից, վորի դեմ վճռական պայքար պիտի մղել՝ համաձայն ՀԿԿ (թ) Կենտկոմի 1931 թ. սեպտեմբեր 5-ի վորոշման: Դպրոցական ուսումնական մշակույթային հողամասն անհրաժեշտ և կոլյերիտ դպրոցների համար և յուրաքանչյուր դպրոց մաքսիմալ չափով պետք և ոգտագործի այդ հողամասն իր ուսումնագա-

տիարակչական նպատակների համար: Պետք և վճռականապես պայքարել փորձնական հողամասը վորպես յեկամուտի աղբյուր գնահատելու դեմ, վոր հաճախ տեղի յե ունեցել մեր դպրոցներում:

Դպրոցական հողամասի ուսցիոնալ և մեթոդիկ ողտագործմանն ահագին նշանակություն և տրվում գյուղատնտեսության ծրագրների մշակման գործում: Դպրոցական հողամասերում կատարած փորձերը պետք և լուսաբանեն այն հարցերը, վոր առաջդրվում են տեսական ուսուցման ժամանակի: Այդ փորձերի բազմազանությունը և նպատակահարմարությունը (ինչպես նբանք կկապվեն ծրագրային հարցերի հետ) լիովին կախված և գասառույի պատրաստականությունից: Ծրագրները հարուստ նյութ են տալիս այդ տեսակետից: Թեև ծրագրներում կոնկրետ աշխատանքների և փորձերի վերաբերյալ ցուցմունքներ չկան, բայց դասատուն պարտավոր և ծրագրային նյութի համապատասխան այս կամ այն փորձն ընտրել: Որինակ, յերբ զրույց և առավում սերմի ուռչելու կամ լցվելու մասին, հեշտությամբ կարելի յե սերմը զանազան պայմանների մեջ դնել, (ավելի քիչ լույս, անմշակ հողամաս և այլն) ուսումնասիրելու բույսի զարգացման համար անհրաժեշտ պայմանները, կամ, որինակ դիտողություններ կատարել կովերի կթելու և կաթի հատկության վրա՝ լավ կտմ վատ կերակրելու գեպքերում և այլն:

Սրա հետ միասին դպրոցը պետք և կոլեկցիաններ և հերթարիուններ հավաքի: Կոլեկցիաններ և հերթարիուններ հավաքելիս չի կարելի միայն առանձին տեսակների հավաքելով ղեկավարվել: Անհրաժեշտ և, վոր կոլեկցիանները և հերթարիունները այս կամ այն տեսակի զարգացումն արտահայտեն տարբեր պայմաններում: Գյուղատնտեսական դիտունները պետք և այնպես գրված լինեն, վոր պահպանվի հեղափոխական թեորիայի և պրակտիկայի միասնականությունը և հիմնվի մատերիալիստական դիտեկտիկայի վրա:

Սոցիալիստական գյուղատնտեսության ուսումնասիրությունը հիմնվում և մարքությունյան իդեոլոգիայի վրա, ընդ սմին անհրաժեշտ և օգուական պայքար՝ ծավալել բուրժուական - վասարար և ամեն տեսակ հակառակութարական թեորիաների և աշխարհայացքների դեմ:

Մի քանի գպրոցների հաստարած հասարակական աշխատանքը պլանվորապես կամպանիայի բնույթ եր կրում կամ բնութագրվում եր նեղ գործնականությամբ։ Այդ աշխատանքն ընթանում եր առանց վորեւ պլանի, առանց կանոնավոր կազմակերպության, վոր և անկանություն եր մտցնում գպրոցի նորմալ կյանքում, և ուսումնա-դաստիարակչական տեսակետից վոչ մի արժեք չուներ։ Մի քանի գեպքերում, դաստիարակությունը և ուսուցությը յենթարկվում եյին հասարակական-արտադրական աշխատանքին, վորով աղավաղվում եր պոլիտեխնիկական դըլրոց։ Հիմքից պետք ե վերացնել այդ դրությունը և հասարակական-արտադրական աշխատանքն այնպես զնել, վոր նա յենթարկի գպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին։

Աշակերտների հասարակական-արտադրական աշխատանքը պետք ե կազմի գպրոցի ուսումնա-արտադրական պլանի որդանական մասը։ Հասարակութան-արտադրական աշխատանքը պետք ե կառուցվի ճշշտ, որացուցային ձևով. աշակերտը պետք ե նախորդ իմանա, թե գպրոցը յերբ, վորեղ և ինչպիսի աշխատանք պետք ե կատարի։ Աշակերտները պետք ե կազմակերպված ձևով ներգրավվեն հասարակական աշխատանքի մեջ։ Անհրաժեշտ է աշխատանքի պրոցեսում ուժեղացնել դասատուների զեկավարությունը և խստագույն պայքար մղել դասատուի գերի թիրագնահատման ձախ տեղենցների դեմ։

Հասարակական-արտադրական աշխատանքի պետք ե ուղարկել ամբողջ խմբին։ Աշակերտներին պետք ե տալ պլան-առաջադրություն։ Աշխատանքը կատարելուց հետո խումբը հաշվառք ե անցկացնում և հետեանքներն ու դիտողությունները մշակում ուսումնական ծրագրների հարցերը լուսարանելու (աշխատանքի կազմակերպման տեսակները խորհանտեսություններում կամ կուտանտեսություններում, հաշվառքը, տվյալ տնտեսության դրական և բացասական կողմերը, լավացնելու միջոցառումները և այլն) և ստացած գիտելիքները սոցիալիստական շինարարության մեջ կիրառելու համար։

Հասարակական աշխատանքը, վորի մասին հաճախ նշվում է ծրագրում, չպետք և սահմանափակվի միայն գյուղատնտեսական կամպանիաների մասնակցությամբ։ Կոլյերիտ գպրոցը պետք ե անընդհատ կապ ունենա մոտակա կոլտնտեսության կամ

խորհանտեսության հետ։ Դպրոցը պետք ե պայքարի աղդաբնապը և զոռմինիմումի, գյուղատնտեսության սոցիալիստականինդուստրիալ վերակառուցման համար։ Սրա հետ միաժամանակ գպրոցը պետք ե կոլտնտեսությունում կատարած աշխատանքը և նրա հետեանքների հաշվառքը ոգտագործի տեսական նյութի խորացման և ամրապնդման համար։

Ծնուեսության առանձին ճյուղերի (մշակույթների) ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել այդ մշակույթների եկոնոմիկայի, տնտեսության և աշխատանքի կազմակերպման հարցերի վրա։ Հարկավոր է ուշադրություն դարձնել աշխատանքի առանձին տեսակների դրվագների նորմայի, ըստ առանձին ամիսների և յեղանակների աշխատանքի բաւանսի, անհրաժեշտ աշխատանքյին ուժի կիրառման, գործադրման կանոնադրության, աշխատանքի և բոշխման հաշվառքի և այլ հարցերի վրա։

Վերջապես անհրաժեշտ է նշել վոր չնայած կոլյերիտ գպրոցը այս կամ այն ճյուղն ե ընտրում վորպիս տվյալ գպրոցի ծրագրի հիմք (ույոնի պրոֆիլի համաձայն), սակայն նա չի կարող անուշադրության մատնել տնտեսության մյուս ճյուղերը, վորոնք կարող ե պատահել տվյալ ույոնում զեկավար դեր չեն հաղում, բայց և այնպիս զգալի տեղ են բռնում։ Այդպիսի շրջանների համար դասատուն ընտրում ե ավելի կրծատ ծրագիր և մշակում ե հիմնական ծրագրի հետ միասին։

ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԻԹՅԱՆ ԳԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղատնեսությանը յեզ ները ժաղավրդական տնենության մեջ

Գյուղատնտեսության եյությունը։ Գյուղատնտեսության գարգացման ետապները (նատուրալ, սպառզական, կապիտալիստական և սոցիալիստական)։

Գյուղատնտեսության և արդյունաբերության վորխարաբերությունը։

Գյուղատնտեսության առանձին շրջանների փոխհարաբերությունը, ինդուստրիայի գերը ժողովրդական տնտեսության և մատնավրապես գյուղատնտեսության դարգացման գործում։

Անհատական տնտեսություն։ Մրա բացասական կողմերը Խոշոր սոցիալիստական, խորհրդային և կոլլեկտիվ տնտեսություն։ Մեքենացման նշանակությունը զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։ Խորհրդային և կոլլեկտիվ տնտեսության տնտեսական և կազմակերպչական ամրապնդման դերը գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման գործում։ Առաջին հնգամյակի հիմունքներն ու հետևանքները և յերկրորդ հնգամյակը։ Մ. Տ. կայանները և նրանց նշանակությունը գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման գործում։ Գյուղատնտեսության առանձին շրջանների մասնագիտացումը։ Մասնագիտացման նպատակն ու նշանակությունը։ Դեկավար և ոժանդակ մշակույթներ։ Մասնագիտական տեխնիկական մշակույթների դերը և սրանց զարգացման հեռանկարները։ Բայցնի զեկավար բնադրավառը զյուղատնտեսության մեջ։

Բայցնների մասնագիտացման հիմունքները (բնական պայմաններ, սոցիալական պատվեր և այլն)։

Մարդու ակտիվ ներդրումը բնության պայմանների վրա։ Գիտելիքներ և նրանց նշանակությունը գյուղատնտեսության զարգացման մեջ։ Զոռմինիմում և ազրոմինիմում։ Մրանց հիմունքները և նշանակությունը։

Հոդ։ Հոդի ծագումը։

Մագման ֆակտորները։ Կլիմայական պայմանների նշանակությունը հոդի այս կամ այն տիպի ծագման համար։ Յուրաքանչյուր տիպի, առանձնապես տվյալ ուայնի, բնութագրումը։ Վրաստանի հոդի տիպերը։ Ռւզդահայաց և հորիզոնական գոտիներ։ Հարստություն և պտղաբերություն։ Հոդի հանքային և որգանական կազմը։ Աղերն ու թթվաւանները հոդում։ Հոդը վորպես բույսի բնակարանային տարածություն։

Թայսերի աձման յիշ զարգացման Թակութեր

Լույսի ազգեցությունը բույսերի աձման և զարգացման վրա։ Բույսերի զարգացման համար լույսի ոպտիմալ պայմանները։ Բույսերի հարմարվելը լուսավորության պայմաններին։

Ջերմության նշանակությունը բույսերի զարգացման համար։ Ջերմության և լույսի փոխադարձ կապը։ Բույսերի աձման հա-

մար մինիմում, մաքսիմում և ոպտիմում ջերմություն—աճման տարրեր փազերում։ Անհրաժեշտ ջերմություն։ Ողի և հոդի ջերմությունների փոխադարձ կապը և նրա նշանակությունը բույսերի աձման և զարգացման գործում։

Զրի նշանակությունը բույսերի աձման և զարգացման համար։ Ընդհանրապես բույսերի և մասնավորապես տարրեր բույսերի զարգացման տարրեր փազերի համար անհրաժեշտ ջրի քանակը։ Բույսերի բերքագության կախումը մթնոլորտային տեղումներից։ Հոդի յերեսի ջրերը և նրանց նշանակությունը։ Հոդի յերեսի ջրերի ջարժումը։ Հոդի յերեսի ջրերի թափանցկանությունը և գոլորշիացումը։ Ցերաշտի պատճառները, միջոցներ դրա գեմ, վոռոգում, չորացում և արհեստական անձրես պլրոբլեմը Խորհրդային Միության մեջ։

Հոդ, ոդ յիշ նրա նշանակությունը։ Զրի և ոդի փոխհարաբերությունը հոդում և սրանց գասավորությունը։ Հոդի շնչառությունը։ Մոխրի տարրերը հոդում և բույսերի պահանջը մոխրի տարրերի նկատմամբ։ Բույսերի հանքային կազմը։ Ցուրաքանչյուր բույսի պահանջը հանքային նյութերի նկատմամբ։ Հանքային տարրերի պաշարը հոդում և նրանց ձեռքը։

Միկրոօգնեների ներգածությունը հաղորդ։ Բորակածնի (ազոտ) նշանակությունը բույսերի համար։ Ինտրիֆիկացիայի պրցեսները հոդում։

Մթնոլորտային բորսկածնի (ազոտի) ֆիկսացիան։ Դեինտրիֆիկացիան և միջոցներ նրա դեմ։

Մոլախատեր յիշ պայքար արած դեմ։ Մոլախոտերը վորպես բերքատվության բացասական ֆակտոր։ Մոլախոտերի բիոլոգիական հատկությունները և սրանց տարածման ձեռքը։ Խայոնում տարածված մոլախոտերի վլխավոր տեսակները և սրանց բնութագրումը։ Մոլախոտերի գեմ պայքարելու միջացները։

Հասարակական աշխատանք։ Ողնել կոլտնտեսություններին և խորհրդական այլ բանաձարանոցի մոլախոտերի դեմ պայքարելու գործում։

Հոդի մեականիր—Հոդի ֆիզիքական հատկությունների կանոնավորումը և մոլախոտերի վոչնչացումը վորպես հոդի մեքենայական մշակման խնդիր։ Մեքենայական մշակումով հոդի բիոֆիմիական պրոցեսների փոփոխումը։

Վարը և սրա խնդիրները: Վարի գործիքների գլխավոր տիպերը (գութաններ), սրանց կառուցվածքը և կիրառումը: Այս գործիքներով վարի յեղանակները:

Վարի խորությունը: Վարի համար հողի սխոտեմի լավագույն պայմանները: Տափանումը և տափանման գործիքներ: Կուլտիվիզացիա և կուլտիվատորներ: Նոր հողամասեր և սրանց մշակումը: Տարբեր տեսակների մշակման յեղանակները. կիսացել: Աշխատանքի կազմակերպումը և արտադրանքի նորման կոլտնտեսություններում, խորհութեանություններում և Մ. Տ. կայաններում հողի վարի ժամանակի:

Հասարակական-ոգտակար աջատանիք: Մասնակցել գործիքների և մեքենաների վերանորոգմանն ու կարգավորմանը ցանքսի կամպանիայի պատրաստման համար (կոլտնտեսութիւն, խորհութեանությունը և Մ. Տ. կայաններում): Կազմել մեքենաների և գործիքների կարգավորման համար նախահաշվիվ և աշխատանքի ցուցակ: Մասնակցել ցանքսի կամպանիային:

Պարարացում:—Հողի պլոտղաբերության վերականգնումը պարարացման միջոցով: Լիակատար և միակողմանի հանքային պարարացումներ:

Որգանական պարարացումներ: Բոլոր ֆոսֆատ (լուսածնատ), կալիյ և այլն: Սրանց արդյունահանությունը բնութագրումը և նշանակությունը:

Անուղղակի պարարացումներ:—Կիրը և մերկելը վորպես հողի կառուցվածքի վերականգնումներ: Սրանց գործադրման յեղանակներն ու անհրաժեշտությունը:

Կանօչ (բուսական) պարարացում:—Բորակածին հավաքող բույսեր: Սրանց ցանքսի և վարի ժամանակն ու յեղանակները: Այս պարարացման աղղեցությունը հողի բերքատվության վերականգնման համար:

Հասարակական-ոգտակար աջատանիք: Մասնակցել պարարացման, սրա կատարման ժամանակի, անհրաժեշտ քանակությամբ աշխատանքի որերի պլանի կազմելուն: Մասնակցել պարարացումներին:

Բույսերի փախարինումը:—Հողի հոգնածությունը և սրա պատճառները: Բույսերի փոխարինումը վորպես հողի պարագետության վերականգնման միջոց: Բույսերի փոխարինման սկզբ-

բունքները՝ տնտեսական և տեխնիկական հիմունքներ (կառուցվածքի վերականգնումը, բաժանումը և այլն): Բույսերի փոխարինման տեսակները, յեղաշայան և բազմազաշայան:

Սերմ յել զանես: Սերմը գյուղատնտեսական տեսակետից: Սերմի թաղանթի և պահեստի մասերի նշանակությունը ուսումնական ժամանակի: Սերմի ուսումնացման վակուրները: Զուր, ջերմություն: Ուսումնացման ակողականությունը ջերմության հետ կապված: Ողը և նրա նշանակությունը: Սերմի հատկությունը ուսումնացման համար,—քաշ, ծավալային քաշ, սրանց աղղեցությունը սերմի վորակի վրա, սերմի մաքրությունը, սրա նշանակությունը, սերմի ածումը և սրա կախումը սերմի արտաքին և ներքին պայմաններից: Ցանքսի համար սերմ պատրաստելը: Սերմի զառումը ու տեսակավորում: Տեսակավորող մեքենաներ և սրանց գործադրությունը: Սերմերի ախտահանումը: Ախտահանող նյութեր և հարմարություններ, սրանց կիրառումը:

Ցանքսի խորությունն ու խտությունը կապված ըրոյախ անհատական հատկությունների, հողի և կլիմայի պայմանների հետ: Ցանքսի յեղանակները: Զեւքի և մեքենայի ցանքսի: Մեքենայի ցանքսի առավելությունները: Խառնացման, շարքացման, խմբացման, սրանց դրական և բացասական կողմերը տարբեր մշակությունների ցանքսի ժամանակի:

Հասարակական-ոգտակար աջատանիք: Ցանքսի կամպանիայի հետ կապված՝ կազմել կոլտնտեսության համար անհրաժեշտ քանակի սերմերի նախահաշվի և պատրաստել այդ սերմերը ցանքսի համար: Սերմերի փորձը, ախտահանումը և ցանքսին պատրաստելը: Սերմիշի (ցանող մեքենայի) վերանորոգումը և պատրաստելը ցանքսի համար:

Բույսերի խնամքը:—Կուլտուրական բույսերի տարբեր ժամանակաշրջանները: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ջրի և ջերմության պահանջը: Պտուղների աճման և հանելու ժամանակաշրջանի կրիտիկական մոմենտները: Հատում, կուլտիվիզացիա, բրում և այլն, սրանց նշանակությունը: Հողի միջարերը մշակելու գործիքներ և սրանց գործադրությունը:

Բերենի հավաքը: Յուրաքանչյուր մշակույթի բերքի հավաքման ժամկետերը: Բերքի հավաքման մեքենաներ և գործիքները ու սրանց գործադրությունը: Կասելը, կասող մեքենաներ և սրանց

կիրառումը: Նախնական և մեքենայացրած տրանսպորտ: Բերքի չորացնելը և պահելը: Շտեմարաններ, նկուղներ, փոսեր, սրանց նախապատրաստելը, ախտահանությունը, հողմահարությունը, պարբերական խնամքը:

Հասարակական-ոգտակար աշխատանք: 1) Մասնակցել բերքի հավաքի կամպանիային, 2) կազմել կոլտնտեսությունների համար աշխատանքի տեսակների և աշխատանքի որերի ցուցակ: Մասնակցել կոլտնտեսության բերքի պահպանման շենքի պատրաստմանը: Կազմել կոլտնտեսությանն անհրաժեշտ մեքենաներով և գործիքներով ապահովելու պլանը: Մասնակցել մեքենաների և գործիքների վերանորոգմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՐՅԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ (20 ԺԱՄ)

1. Գյուղն ու քաղաքը պլուետարիատի դիկտատուրայի որոք: Ի՞նչ ստացավ գյուղը Հոկտեմբերյան Հեղափոխությունից: Խորհրդային սիստեմի առավելությունները գյուղատնտեսության զարգացման տեմպերի համար: Քաղաքի և գյուղի հակադրությունները վերացնելու ուղիները: Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը:

Սոցիալիզմի հաղթանակը գյուղատնտեսության մեջ:

«Խորհրդային Միությունը մանր և մանրադույն հողագործական յերկրից փոխակերպվում և աշխարհում ամենախոշոր հողագործական յերկրի՝ կոլեկտիվացման, խորհրդական տեսապները: Համատարած կոլեկտիվացում և այդ հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, վերացումը: Գյուղացիության շրջադարձը սոցիալիզմի ուղու վրա և գյուղում զասակարգային ուժերի փոխարաբերության մեջ առաջացած հիմնական փոփոխությունը: Կոլտնտեսային գյուղացիությունը վորպես պրոլետարիատի հիմական և գլխավոր հենարան գյուղում և հողագործության կենտրոնական դեմք: Կոլտնտեսությունների ձերը: Արտելը վորպես կոլտնտեսությունների հիմնական ձեւ ալյալ ետապում:

«Սոցիալիզմի այս հաղթանակը, վոր լուծում և պրոլետարական հեղափոխության ամենակարենը և ամենադժվարին խընդիրը, համաշխարհային - պատմական նշանակություն ունի» (XVII Համ. կուսկոնֆերենցիայի գորոշումներից):

Յերկրի ինդուստրացման մեր տեմպերը — գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքն են:

«Ընթացիկ ժամանակաշրջանում մեր ժամանը արդյունաբերությունն ամրուեն վոտքի յեւ կանգնել և դրանով հենց սեփական բազա յեւ ստեղծել ամրող ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար, բազա՝ սոցիալիստական խոշոր մեքենային ինդուստրիայի համար»:

«Հ-ըդ 5-յակի հիմնական և վճռական տնտեսական խնդիրն են ավարտել ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումն, ստեղծել նորագույն տեխնիկական բազա ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար» (Համ. կուսկոնֆերենցիայի վորոշումներից):

Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի (սեկտորի) աճումը և դասակարգային պայքարի ուժեղացումը զյուղում:

Վնասարարությունը՝ գյուղատնտեսության բնագավառում և պայքարը դրա դեմ: Պայքար աջ և ձախ ոպորտունիզմի և հականեղափոխական տրոցկիզմի դեմ գյուղատնտեսության բնագավառում:

2. Լենինի կոռպերատիվային պլանը և գրա իրականացման ուղիները: Պրոլետարիատի ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ: Կամավոր անցումը տնտեսության սոցիալիստական ձեերին-լենինյան պլանի հիմնական սկզբունքն եւ: Կուլակության ընդդիմության ջախջախումը վորպես գյուղացիության սոցիալիստական վերափոխման պայման: Կոլտնտեսությունների սոցիալական բնույթը: Կոլանտեսային շարժման հիմնական ետապները: Համատարած կոլեկտիվացում և այդ հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, վերացումը: Գյուղացիության շրջադարձը սոցիալիզմի ուղու վրա և գյուղում զասակարգային ուժերի փոխարաբերության մեջ առաջացած հիմնական փոփոխությունը: Կոլտնտեսային գյուղացիությունը վորպես պրոլետարիատի հիմական և գլխավոր հենարան գյուղում և հողագործության կենտրոնական դեմք: Կոլտնտեսությունների ձերը: Արտելը վորպես կոլտնտեսությունների հիմնական ձեւ ալյալ ետապում:

«Յերկրորդ հնգամյակի հիմնական բաղաքական խնդիրն են վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերը և ընդհանրապես դասակարգերը, միանգամայն վոչնչացնել դասակարգային զանազանությունները ու շահագործում ծնող պատճառները և հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր աղքանակությունը դարձնել անդասակարգային սոցիալիստական հասարակությունն ստեղծողներ» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումներից):

Դաստկարգային պայքարը ժամանակակից ետապում: Հետագա կոլեկտիվացման տեմպերն ըստ ՀԿԿ (բ) կենտկոմի 1931 թ. ոգուստոս 2-ի վորոշման: Լենինի կոոպերատիվային պլանի աջ ոպորտունիստական և արոցկիստական աղավաղումները: Տրոցկիզմի հականեղափոխական բուռյթը: Աջ վտանգը վորպես գըլսավոր վտանդ ավյալ ետապում:

3. Խորհուտնտեսությունները—պյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վողնաշարն են: Խորհուտնտեսությունների աճումն ու նվաճումները:

4. Խորհուտնտեսությունների և կոլտնտեսությունների փրփարաբերությունները: ԽՍՀՄ Խորհուրդների VI համագումարը խորհուտնտեսությունների խնդիրների մասին:

Խորհուտնտեսությունների խնդիրը յերկրորդ հնգամյակում: «Խորհուտնտեսությունները պետք է լրացնեն իրենց արտադրությունն ամեն ուղղությամբ, նույն թվում նաև տեխնիկական մշակույթների և անասնաբուծության ուղղությամբ, և պետք է ուժեղացնեն իրենց գերն իրրե արտադրության սոցիալիստարեն կազմակերպող, գյուղատնտեսության մեջ բարձր մեքենական տեխնիկա կիրառող և ժամանակակից ագրոնոմիայի ու զոռտեխնիկանիցի բոլոր նվաճումները ցուցաբերող որինակներ» (Համ. XVII կուսկոնքերինցիայի վորոշումներից):

5. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հերթական խնդիրները: Ընկեր Ստալինի վեց պայմանները գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության տեխնիկայի տիրապետում, ագրու և զոռտեխնիկական միջոցառումների իրականացում, բերքատվության բարձրացում, պայքար վորակի համար: Կոլտնտեսությունների կազմական-տնտեսական ամրապնդման և կոլտնտեսային մասսաների սոցիալիստական վերաբաստիարակության խնդիրներն ուշագրության կինտրոն են կազմում նաև յերկրորդ հնգամյակում: Կոլտնտեսային ապրանքային գերմանների շինարարություն և դրանց նշանակությունն անասնաբուծական պրոբլեմը լուծելու գործում:

Գյուղատնտեսության պլանավորում և ույոնացում: Պլանավորման սիստեմը և մեթոդները: Ընթացիկ հնգամյակի իրագործումը գյուղատնտեսության վերաբերմամբ: Գյուղատնտեսության յերկրորդ հնգամյակը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտման հեռանկարները. գյուղատնտեսական արտադրության մեքենացման ավարտումը հիմնականում, անասնաբուծական պրոբլեմի լուծումը հիմնականում, արտադրանքի աճումը:

Գյուղատնտեսական աշխատանքի ինդուստրիալ աշխատանքի մի այլ տեսակին փոխակերպվելու հեռանկարները և քաղաքի ու գյուղի հակադրության բոլորովին վերացման պայմանների ստեղծում:

1932 թ. կոնտրոլային թվերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱԽԱԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

(10 ծամ)

1. Անասնաբուծական բրիգադներ կազմելու ոկզեռնքները: Բրիգադների մասնագիտացումը և աշխատանքի տեխնիկական բաժանումը բրիգադների ներսում:

Աշխատանքի վարձատրության կազմակերպումն անասնաբուծության բնագավառում, անհատական և խմբական գործավարձ, արտադրանքի նորմա: Սպասարկման դիմագրկության վերացում: Սոցիալիստական մրցում: Սոցմրցման և հարգածայնության հիմնական ցուցանիշները: Պարզեատրում անասնաբուծության մեջ:

2. Գյուղատնտեսական կենդանիների խնամքի և կեր տալու վերաբերյալ բրիգադային աշխատանքի կարգ ու կանոնը: Կենդանիների, շենքի մաքրելը: Կեր պատրաստելը. կեր տալը: Կթելու ժամանակը և կարգը: Գյուղատնտեսական կենդանիներին խնամելու ներքին կարգ ու կանոնները:

3. Ապրանքային ֆերմայի աշխատանքի գեկավարման կարգը: Վարիչ, ավագ բրիգադիր, անասնապահ-բրիգադիրներ և կթողներ: Կոլտնտեսական մասսաների և խորհուտնտեսությունների բանվորների մասնակցությունն անասնաբուծության կանոնավորման գործում: Արտադրական խորհրդակցություններ և դրանց աշխատանքը:

ԳՅՈՒՂԱՏՆՏ. ՄԵԳԵՆԱՅՈՒՄՆ ՈՒ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

(25 Ժամ)

1. Աւտեղ եներգետիկ բազայի նշանակությունը գյուղատնտեսական արտադրության մեջ: Բարձր մեքենական տեխնիկայի կիրառման հասրավորությունը միայն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմաններում: Խորհանական սոցիալիստական շինարարություն:

Գյուղատնտեսության համարած կոլլեկտիվացումը վորպես գյուղատնտեսական արտադրությունն արդյունաբերական արտադրության հիման վրա վերակառուցելու անհրաժեշտ նախադրյալ: Գյուղատնտեսության տեխնիկական և սոցիալական վերակառուցման միասնությունը: Ենթակառող հնգամյակի խընդիրը գյուղատնտեսության վերաբերյալ: «Իրականացնել սոցիալիստական վերակառուցման ինդիրներն այնպես, վոր մեքենա-տրակտորային կայաններն ընդդրկեն բոլոր կոլտնտեսությունները և ավարտեն հիմնականում գյուղատնտեսական արտադրության մեքենացումը» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումներից):

2. ՄՏ կայանների նշանակությունը վորպես գյուղատնտեսական արտադրության եներգետիկ բազա: Պահանջներ շարժիչներից գյուղատնտեսության մեջ: ՄՏ կայանների դերը գյուղատնտեսության կոլլեկտիվացման գործում: ՄՏ կայանների ժամանակակից ցանցը և դրա զարգացումը: ՄՏ կայանների մասնագիտացումը:

Տրակտորի դերը և նշանակությունը գյուղատնտեսության մեջ: Տրակտորի կիրառումը հողագործության մեջ (վար, տափանում, ցանք, հունձ), ստացիոնար աշխատանքներում (կամ, աղորիք, ձիթահան և սղոցարան գործարաններ, ջրմուղ) և տրանսպորտի համար (փայտ, վառելափայտ և շինանյութեր կրել և այլն):

Տրակտորի կազմությունը: Հիմնական մասերն ու դրանց նշանակությունը: Տրակտոր խնամելու տարրական կանոնները: Տրակտորի նախապատրաստելու աշխատանքի համար: Տրակտոր բանեցնելու ու նրա կարգավորումը: Խնամք աշխատանքի ժամանակի Տրակտորի պահելը: Վառելու և քսելու յուղեր: Տրակտորի ժամանրաբեռնումն ըստ ժամանակաշրջանների: Տրակտորի եկոնո-

մականություն գյուղատնտեսական դործիքներ և մեքենաներ: Հողագործության մեջ հիմնական աշխատանքներ կատարելու համար գործազրվող գործիքների տեսակները: Աղբատեխնիկայի պահանջները գյուղատնտեսական դործիքների և մեքենաների աշխատանքներ:

Տրակտորային գութաններ և տափաններ: Հիմնական աշխատանքների մասերը և դրանց դերը: Ավտոմատի կազմությունը և աշխատանքները: Դրվածքի և ստուգման կանոնները: Կցում տրակտորին: Հող մշակող ազրեկատ: Գործիքների աշխատանքի արտադրության կանուգությունը և հատկությունը:

Տրակտորային սերմիչներ (ցանիչներ): Սերմիչների տիպերը: Առանձին մասերի դերը: Պահանջներ սերմիչ ապարատից: Դրվածքի ու ստուգման կանոնները: Խնամքը:

Հնձող մեքենաներ: Խոտհար, հնձիչ խուրճ կապող մեքենաներ: Առանձին լծակների կազմությունը, դերը, գանակի ճիշտ դնելը, հնձիք բարձրության կարգավորումը: Հազորդիչի սխմանը մեքենաների առանձին տիպերում: Դրվածք և ստուգում, արտադրությանը:

Բարդ կալիչ: Հիմնական մասերի դերը, աշխատանքի սկզբանները: Հնձող կոմբայններ—նրանց կազմության սխման և աշխատանքը: Կոմբայնի կիրառման շահուսկետությունը գյուղատնտեսական խոշոր արտադրության պայմաններում:

Տրակտորային կցորդ ինվենտարի նոր տիպերը ԽՍՀՄ գյուղատնտեսության մեջ: Տնկող մեքենաներ, կտուլահատ զզող, բամբականավաք, ճակնդեղանավաք և այլ կոմբայններ:

Ելեկտրականության կիրառումը գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիայի նշանակությունը: Ելեկտրական եներգիայի առավելությունները մյուս տեսակների համեմատությամբ: «Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման կարևորագույն տարրն եւ ստեղծել նորագույն եներգիակի բազա, հիմնված արդյունաբերության և տրանսպորտի ամենալոյն ելեկտրիֆիկացիայի և ելեկտրահներգիան գյուղատնտեսության մեջ առաջնաաբար արմատավորելու վրա՝ ոգտագործելով ջրային եներգիայի, հիմնական և տեղական ավազանների ջարածության վերաբերյալ հանդիսավոր վառելիքի տեղական տեսակների (առլի, թերթաքար) հսկայական ռեսուրսները: Առաջնաաբար առլի, թերթաքար հսկայական ռեսուրսները:



անպայմանորեն անհրաժեշտ և համարում հասնել 1937 թ. ելեկտրականերգի վոչ պակաս քան 100 միլիարդ կվ. ժ. արտադրության՝ հանդեպ 1932 թ. 17 միլիարդի, վոչ պակաս քան 250 միլիոն տոնն ածխահանության՝ հանդեպ 1932 թ. 90 միլիոն տոննի, և նավթի արդյունահանության մեծացմանը $\frac{2}{1/2}$ —3 անգամ» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումից): Ռայոնական և տեղական ելեկտրակայանները եներգիայի, տեղական եներգիայի ոգտագործում (վառելիք, ջուր, քամի):

Ելեկտրականության կիրառում հողագործության մեջ: Հողի ելեկտրական մշակում, կալսում, հատիկների դուռմ, ելեկտրական ներանտեսական և դաշտային տրանսպորտ: Հողի իրոնիզացիան (ելեկտրահաղորդիչ գարձնելը) և դրա նշանակությունը:

Ելեկտրականությունը բանջարաբուծության մեջ: Զերմոցների և ջերմածուների ելեկտրականությամբ տաքացնելը:

Անասնաբուծության ելեկտրիֆիկացիա: Ելեկտրականության կիրառումն անասունների համար կեր պատրաստելիս կովերին ելեկտրականությամբ կթելը: Կենդանիների մաքրելը և խուզելն ելեկտրականությամբ: Ելեկտրառափափոխություն և ելեկտրո-տրանսպորտ կենդանիների շենքերում (գոմերում):

Ելեկտրականությունը թուչնարուծության մեջ, ելեկտրականության կիրառումը ձագեր դուրս բերելու, մատղաշ թուչուններ դաստիարակելու և նրանց կերը պատրաստելու համար:

4. Տրանսպորտի գերը սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության պայմաններում: Ճանապարհների նշանակությունը: Ճանապարհների շինարարությունը և ճիշտ շահագործումը: Ճանապարհային շինարարության համաժողովրդական նշանակությունը: Լայն մասսաների մասնակցությունը: Ճանապարհային մինիմում և նրա անցկացման տեխնիկան:

5. Կոլտանտեսությունների տեխնիկական սպառազինումը: «Յերկրորդ հնգամյակի հիմնական և վճռական խնդիրն և ավարտել ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը, նորագույն տեխնիկական բազա ստեղծել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումներից):

Նոր տեխնիկական բազայի վրա արագորեն վերակազմվող գյուղատնտեսության վերակառուցումը,

ՄՏ կայանների դարձացման հեռանկարները: ՄՏ կայանների մասնագիտացումը, հատիկացին ՄՏն, բանջարեղենի ՄՏն, բամբակի ՄՏն, ճակնդեղ ցանող սայոնների ՄՏն, կտավահատցանելու ռայոնների ՄՏն և այլն: ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտանտեսությունների հիմնական գյուղատնտեսական աշխատանքների մեքենացում: Զիու, վորպես լծկանի, թերագնահատումը մի շարք սայոններում: Զիու և արականարի զուգորդում:

Գյուղատնտեսության մեքենացումը $100^0/_{\circ}$ -ով ավահավառ գյուղատնտեսական մեքենաների տիպերի մշակման խնդիրը: Համակցյալ (համակարգություն) գյուղատնտեսական մեքենաները՝ վորպես գյուղատնտեսական կորուստների դեմ պայքարի և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոց: Բանվորական և կոլխոզային լայն մասսաների գյուղարարական և ռացիոնալիզացիան աշխատանքը գյուղատնտեսության մեջ:

6. Ժողովրդական տնտեսության, նույն թվում նաև գյուղատնտեսության, հետագա տեխնիկական սպառազինումն ապահովող հզոր արտադրական բազայի ստեղծում:

Գյուղատնտեսական մեքենակառուց գործարանների աճումը: Արտադրության տեխնիկայի տիրապետումը Ստալինդրադի տրակտորային գործարանում, «Կրասնի Պուտիլովկա»-ում: Կոմբինատ արտադրող գործարանների բանեցնելն ու ծավալումը: Մոսկվայի և Նիժեգորոդի ավտոգործարանների և մյուս հսկաների (գիգանտների) բանեցնելը:

Լաբորատորա-հետազոտական աշխատանքներ: Պարզել կոլտանտեսության մեջ և ՄՏ կայանում յեղած գյուղատնտեսական մեքենաների արտադրողականությունը: Ծանոթանալ գյուղատնտեսական սայոնի ելեկտրիֆիկացիայի պլանին և եներգետիկ բազա ստեղծող տեղական սեսուրաներին (ջուր, վառելիքի տեղական տեսակներ) և այլն:

ԽՈՐՀՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՐԴՈՒՄԸ

(60 Ժամ)

1. Գյուղաճնեսուրյան պլանավորումը չեթ մասնագիտացումը
(6 Ժամ)

ա) Պլանավորման դերը սոցիալիստական արտադրության շինարարության մեջ: ԽՍՀՄ գյուղատնտեսության պլանավորման մանրբութուական և բուրքուական թեորիաները:

Պլանավորման, հակահեղափոխական և զնամարար տեսակետներ, գյուղատնտեսության պլանավորումը վորպես ժողովրդական տնտեսության միասնական պլանի մի մաս: Պլանը վորպես հարձակում կապիտալիստական ռարրերի վրա և գործիք սոցիալիստական շինարարության:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների պլանային տեղավորումը Միության տերրիտորիայում համապատասխան ԽՍՀՄ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջարկության Միության տերրիտորիայում պլանային տեղավորման հիմնական պայմանների: Գյուղատնտեսական արտադրության Միության տերրիտորիայում պլանային տեղավորման հիմնական պայմանները կոլտնտեսությունների և խորհութեանտեսությունների շինարարության ժամանակ: Խորհութեանտեսությունների և կոլտնտեսությունների տեղը ԽՍՀՄ պլանային տընտեսության մեջ:

ԽՍՀՄ գյուղատնտեսության մասնագիտացումը վորպես գյուղատնտեսության պլանային վերակառուցման պայման: Մասնագիտացման մակարդակը խորհութեանտեսություններում և կոլտնտեսություններում: Արտադրությունների զեկավար ճյուղերի գյուղատնտեսական ձեռնարկությունների մասնագիտացումը: Արդյունաբերության զեկավար գերը գյուղատնտեսական արտադրության և նրա մասնագիտացման զարգացման մեջ: Ագրոտեխնիկական և գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը: Գյուղատնտեսության մասնագիտացման զնամարար հիմնավորումները (Միքսիկով, Զելենցի և այլն): Հացահատիկի, տեխնիկական մշակույթների, բանշարեղենի արտադրության ԽՍՀՄ հիմնական գյուղատնտեսական գոտիները, մասուռ և կաթնատուանանարուծության, խողաբուծության, վոչխարաբուծության և

թոշնաբուծության գոտիները: Կուսակցության և կառավարության հիմնական դրվածքները հացահատիկային լանտեսության, անսանարուծության, կերի բաղայի և տեխնիկական մշակույթների վերակառուցման դորձում:

բ) Պլանային առաջարկություն, նրա դերն ու նշանակությունը կոնկրետ մասնագիտացման անտեսության կազմակերպման ժամանակի: Եերկրորդ հնգամյակի խնդիրները: Պլանային առաջարկության իրացումը, տարեկան արտադրական և աշխատանքի պլաններ և սրանց հիմնական բաժինների բնութագրումը:

Լայն մասսաներին արտադրության պլանավորման մեջ ներգրավիլու նշանակությունն ու ձեւերը: Հանդիպական արդինապահանը վորպես պլանային առաջարկությունների կատարման և գերակատարման պայմանն և վորպես նրա մշակմանը լայն մասսաների ակտիվ մասնակցության ցուցանիշ: Ընկ. Ստալինի վեց պայմանները վորպես առաջարկված արտադրական խնդիրների լուծման հիմք:

2. Արտադրության չափեր (2 Ժամ)

Խոշոր գյուղատնտեսական արտադրության առավելությունները: ԽՍՀՄ պայմաններում խոկական խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության կառուցման հնարավորությունների հոկայիկան ընդլայնումը:

Գյուղատնտեսության ամրապնդումը կապիտալիզմի ժամանակ, սրա հետևանքները, մեր խորհրդային սխտեմի առավելությունները: Զայանովի ովկտիմալ չափերի վնասարար թերթիանները: Խոչով և վորոշվում գյուղատնտեսական ձեռնարկությունների չափերի մեծությունը ԽՍՀՄ-ում: Սոցիալական ձեւ, անտեսության մասնագիտացման, արտադրության տեխնիկական, աշխատանքի կազմակերպման մեթոդները:

Կոլխոզների խոշորացման և մանրացման պրակտիկան: Հոկայամոլության (գիգանտումանիայի) շրջանի սխալները և հակառակ սխալներ ավելորդ մանրացման նկատմամբ: Զանազան արտադրական ուղղությունների խորհութեանտեսությունների ուցինալ չափերը: Սոցիալիստական ձեռնարկությունների ուցինալ կազմակերպման հիմնական ցուցանիշները: — պլանային առաջարկու-

թյան կատարումը, աշխատանքի արտադրողականության բարձրությունը և արտադրանքի ինքնարժեքի մակարդակը:

3. Գյուղատնտեսության արածության կազմակերպումը (5 ժամ)

Տերիտորիայի նշանակությունը գյուղատնտեսական արտադրության կազմակերպման մեջ: Տարբեր գյուղատնտեսական մշակելի հողեր, սրանց պլանային ոգտագործումը: Արտադրական հողամասեր, տնտեսական կենտրոններ, սերմնափոխության դաշտեր, ճանապարհների ցանց, ջրամատակարարություն և այլն խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններում: Գյուղատնտեսական մշակույթների փոխվելու արտադրության մասնագիտացման խորացման կողմը Միության տարբեր գոտիներում:

Սերմնափոխության վիճովությունը կախված արտադրության պլանային առաջարկության ընույթից և բովանդակությունից: «Յերկրորդ հնագամյակի կենտրոնական խնդիրը պետք է լինի վճռականորեն բարձրացնել կոլխոզների և սովխոզների գաշտերի բերքատվությունը և բայց կիկորեն լուծել յերաշտի դեմ պայքարելու հարցերը»: Ազրոտեխնիկայի, քիմիացման և մեքենայացման դերը գյուղատնտեսական տարբեր հողերի ոգտագործման մեջ:

Լարուառ աշխատանք: — Հաշվել կոլխոզի սերմնափոխության արտադրանքը կապված տնտեսության մասնագիտացման հետ:

4. Արտադրության միջոցների կազմակերպումը (12 ժամ)

ա) Արտադրության հիմնական միջոցները ժամանակակից մասնագիտացած գյուղատնտեսական ձեռնարկություններում: — Եներդետիկա, կցորդ գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, տրանսպորտ և կառլ, շենքեր: Արտադրության հիմնական շրջանառու միջոցները, սրանց հարաբերակցությունը կոլխոզներում, սովխոզներում՝ կապված մասնագիտացման հետ:

Արտադրության համայնացրած և չհամայնացրած միջոցները: Մ. Տ. Կայաններից սպասարկվող կոլխոզների արտադրության միջոցների կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները:

Ուելյեֆի, հողի ֆիզիքական կազմության դերը տնտեսության մեջ եներգետիկայի պահանջվող քանակը վորոշելիս: Տըակտորների տարեկան բեռնվածության նորման: Տնտեսության կենդանի և մեքենայական քաշող ուժի զուգորդումը: Պլանային առաջադրության հիման վրա անհրաժեշտ քանակության տրակտորների հաշվարկը: Կցորդ ինվենտարի պահանջված քանակի վորոշումը: Յուրաքանչյուր տեսակ աշխատանքի և ամբողջ տընտեսության կցորդ մեքենաների և գործիքների պահանջը: Ընթացիկ և կապիտալ վերանորոգում, ամորտիգացիա: Մերմերի, պարարտիչների, տրանսպորտի և այլնի պահանջը:

բ) Շենքերի կազմակերպումը: Ի՞նչպես ե սահմանվում գյուղատնտեսական ձեռնարկությունների շենքերի պահանջը: Ի՞նչպիսի արտադրական գյուղատնտեսական շենքեր են անհրաժեշտ մասնագիտացած սովխոզներում և կոլխոզներում: Շենքերի տիպը, չափը և կուբատուրան: Ներքին միջոցների մոբիլիզացիայի և տեղական շինարարական նյութերի ոգտագործման խնդիրը: Կուլտ-կենցաղային նպատակի համար շենքեր:

Վերանորոգման համար շենքեր՝ դարբնոցներ, արհեստանոցներ, շարժական դաշտային արհեստանոցներ և այլն:

Լաբորատոր աշխատանքներ: — Վորոշել կոլխոզի մեքենայական և կենդանի քաշող ուժի, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների կարիքը:

Կազմել գյուղատնտեսական մեքենաների և շարժիչների տարեկան ծանրաբեռնվածության գրաֆիկը:

Հաշվել տնտեսության սերմերի, պարարտացման և տրանսպորտի պահանջը:

5. Աշխատանքի կազմակերպումը (13 ժամ)

ա) Աշխատանքի կազմակերպման հաշանակությունը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ:

Աշխատանքի առանձնահատկությունը գյուղատնտեսության մեջ կապված աշխատանքների սեղոնականության հետ:

«Գյուղատնտեսության լիակատար կոլեկտիվացումը, պետական խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների աճումը և սովխոզներին ու կոլխոզներին առաջավոր մեքենային տեխնի-

կայով զինումը, վորը գործնականում փոխակերպում և դյուզատնուեսական աշխատանքը և ինդուստրիալ աշխատանքի բազմակերպությունն ու արդյունաբերության և դյուզատնուեսության միջև առըսմանքափոխանակության կապի զգալի ուժեղացումը, գյուղի և քաղաքի հակադրությունների լիակատար վերացման պայմաններ են ստեղծում» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումը):

բ) Աշխատանքի կազմակերպության հիմնական սկզբունքները գյուզատնուեսության մեջ.—աշխատանքի պահանջի սահմանում և սրա պլանային բաշխումն ըստ արտադրական պլանի: Աշխատանքի մասնագիտացումը: Բրիգադ, գործավարձ և տնտեսչիվ: Պայքար վորակի համար: Սոցիալիստական մրցակցություն և հարգածայնություն: Բրիգադների կազմակերպումը: Բրիգադների կազմակերպման սկզբունքներն ըստ ճյուղերի: Աշխատանքի մասնագիտացումը բրիգադում: Դիմագրկության վերացումը: Բրիգադի արտադրական առաջադրությունը: Բրիգադի և նրա դերը բրիգադի աշխատանքը: Աշխատանքի հաշվառքը բրիգադում:

Գործավարձը տվյալ հոտապում վորպես տնտեսության մեջ աշխատանքի կազմակերպման միակ—ճիշտ սիստեմ: Նորմաները վորպես գործավարձի հիմք: Արտադրանքի նորմերի սահմանումը: Գործավարձի ձեւը (բրիգադյին, խմբային, անհատական). Գործավարձի տեսակները և սրանց կիրառման հնարավորությունը արդյունաբերության և դյուզատնուեսության մեջ: Աշխատանքի վորակը, պարզեատրում և տուգանում: Արտադրական խորհրդակցություններ և սրանց աշխատանքը:

գ) Աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները կոլխոզներում: Աշխատանքի կազմակերպման առբերությունը կոլխոզներում ու սովորողներում և սրա բացատրությունը: Աշխատանքի կազմակերպումը կոլխոզում չեկ (β) կենտկոմի 1932 թ. 4-II վորոշման համապատասխան: Աշխատանքի պլանային բաշխումը կոլխոզներում: Աշխատանքի պաշարը վորոշելու մեթոդները և աշխատանքի պահանջի հաշվումը: Կանացի և գեռահասների աշխատանքի ոգտագործումը: Տարագնացությունն կազմակերպումը: Տարագնացությունը խթանող միջոցառումները: Աշխատանքի գնահատումը կոլխոզներում և աշխատորերում:

Յեկամափառումը կոլխոզներում: Կոլխոզների կազմակերպչական ամբապնոման գործում ըստ կոնտրակտացիայի վակատար և իր ժամանակին իրագործելու դերը:

Յեկամափառումն ըստ գործազրած աշխատանքի, հաշվի առնելով նրա վորպես վորպես կոլխոզներում յեկամափառումն միակ—ճիշտ սկզբունք: Կոլխոզների աշխատանքի արտադրողականության բարձրացումը վորպես նրա կազմակերպչական տընտեսական ամբապնոման կարեռապույն պայման: Յեկամափառումն ըստ շնչի վորպես 1930 թվի կոլխոզների աշխատանքի ամենագլխավոր թերությունը: Կուլակների աղիտացիան շնչի սկզբունքի համար:

Կոլխոզների և սովորողների ապրանքային արտադրանքի իր ժամանակին և լիովին հանձնելու անհրաժեշտությունը՝ պլանային տուաջագրության համապատասխան: Ընդլայնուծ արտադրությունը և կուտակումը կոլխոզներում, անբաժանելի փոնդերի նշանակությունը կոլխոզներում, սերմի, կերի և ապահովագրման փոնդերի առանձնացումը համապատասխան կոլխոզի արտադրական-փինանսական պլանի և ույյոնի կոլխոզային արտադրությունն ընդլայնելու կոնտրոլային առաջադրությունների:

Բերքի բաշխումն ըստ աշխատորերի: Հինգ տոկոսը և նրա նշանակությունը: Կոլխոզային կագրերի պատրաստումը և կոլխոզնիկների կուլտ-կենցաղային պահանջների սպասարկման բարելավումը:

«Կոլխոզների կազմակերպչական-անտեսական ամբապնոման և կոլխոզային մասսաների սոցիալիստական վերադաստիքարակման խնդիրները պետք ե ուշադրության կենորոն լինեն նաև յերկրորդ հնգամյակում» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումը):

Լարուատոր աօխատանիենք: Հաշվել կոլխոզի առանձին ճյուղերի ըստ ժամանակաշրջանների բանվորական ուժի պահանջը: Ուսումնասիրել բրիգադների՝ անտեսության առանձին ճյուղերի, տարբեր ժամանակաշրջաններում սպասարկման չափը: Կազմել բերքի բաշխման սխեման՝ ցույց տալով, թե հացահատիկների, անասնաբուծության, բանջարաբուծության և այլն մթերքների վրա քանակը պլանային առաջադրության համաձայն պետք ե տրվի պետությանը, ինչ և առանձնացած անբաժան փոնդի

համար, ինչ քանակություն պետք է բաշխվի ըստ աշխատորերի և այլն:

6. Անկավագույշան կազմակերպումը (6 ժամ)

Արտադրությունը ղեկավարելու հիմնական սկզբունքները՝ միանձնյա իշխանություն, ինստրուկտաժ, հաշվառք և կոնտրոլ: Միանձնյա իշխանության սկզբունքի զուգորդումը արտադրության ղեկավարման մեջ մասսաներին ներգրավելու խնդիրների հետ: Սովորողների ղեկավարման սխտեմը:

Կոլխոզների ղեկավարության առանձնահատկությունները:

Հնդհանուր ժողով, վարչություն, վերստուգիչ հանձնաժողով և սրանց աշխատանքները:

25 հազարյակների գերը կոլխոզյին արտադրության կանոնավորման մեջ:

Հաշվառքի և հաշվետվության նշանակությունը արտադրության մեջ: Հաշվառքի և հաշվետվության դերը տնտեսաշվի անցկացման և գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի իջնցման պայքարի մեջ: Աշխատանքի քանակի և վորակի վերահսկողության կազմակերպումը: Ինստրուկտաժը, տնտեսաշվիը վորակի տնտեսությունը վարելու հիմունք, սովորողները տնտեսաշվի անցնելու սկզբունքները:

7. Կոլխոզի արտադրական պլանը (10 ժամ)

Արտադրական պլանի նշանակությունը: Կոլխոզի արտադրական պլանը վորակի ժողովրդական-տնտեսության միասնական պլանի մասը: Կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանի հիմնական բաժինների ուսումնափորումը:

1) Կոլխոզի ուղղության ընտրությունը կապված նրա մասնագիտացման հետ:

2) Սերմափոխության դաշտերի սահմանումը:

3) Հողային տարածության (տերիտորիա) կազմակերպման պլանը:

4) Արտադրության համայնացրած ճյուղերի պլանը (դաշտաբուծություն, անասնաբուծություն, վոչխարաբուծություն և այլն):

5) Շինարարության պլանավորումը:

6) Արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքների պլանավորումը:

7) Կենդանի, մեքենայական և քաշող ուժի կազմակերպման պլանը:

8) Աշխատանքի կազմակերպման և յեկամտի բաշխման պլանը կոլխոզում:

9) Տնտեսական գործունեյության հետևանքների պլանավորումը և կոլխոզի ֆինանսական տնտեսությունը:

Լաբորատոր աշխատանքներ: Կազմել տառանձին մշակույթների ցանքսի պլանը, հաշվել սերմերի և պարարտացման պահանջը: Հաշվել տնտեսության առանձին ճյուղերում ծախսած աշխատանքը: Կազմել տնտեսական տարվա հանրագումարը արտադրական պլանի համաձայն:

ՀԱՏԻԿԱՅԻՆ ՄԵԱԿՈՒՅԹՆԵՐ

Հատիկային մշակույթների տնտեսական և քաղաքական նշանակությունը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիները: Գյուղատնտեսության հիմնական պրոբլեմները հատիկային և տեխնիկական մշակույթների բնագավառում: Կոլխոզությունների և խորհանտեսությունների դերը հատիկային մշակույթների զարգացման գործում:

16-րդ Համագումարի և Հեկ Կենտրոնի վորոշումները: Հատիկային մշակույթների զարգացման հնգամյա պլանը: Յերկրորդ հնգամյակի հեռանկարները Խորհրդային Միության մեջ Վրաստանում և կոլխերիտ դպրոցի ուսունում: Կոնտրակտացիան և նրա գերը հատիկային մշակույթների զարգացման գործում:

Հասարակական աշխատանք: Կուսակցության և Խորհրդային իշխանության վորոշումները հատիկային մշակույթների մասին հանրամատչելի դարձնել մասսաներին:

Հացահատիկային բույսերի լենդինանուր բնուրագիրը: – Արմատ, ցողուն, տերև, բողբոջ, ծաղիկ, պտուղ:

Հացահատիկների մատակարարը: Աշխանացան և գարնանացան հացահատիկների տեսակները: Աշխանացան և գարնանացան հացահատիկների զարգացման կլիմայական և հողային անհրաժեշտ

պայմանները: Մնաղատու նյութերի պահանջը: Հացահատիկային մշակույթների տեղը սերմանափոխության մեջ:

Հոգի մշուկումը յեվ պարագացումը հացահատիկային մշակույթի համար: Գոմալը և հանքային պարաբռացումներ, քանակությունը, հողի մշակումը: Վաղ գարնանային վարի: նշանակությունը:

Մշակման ժամկետները: Հողի մշակման անհրաժեշտ մեքենաները և գործիքները: Մանոթություն: սրանց հետ և սրանց գործադրությունը:

Յանես: Յանեսի նյուրի պահանջները: Սերմի փորձելը: Առաջացման պայմանները: Սերմը ցանելու նախապատրաստություն: Սրսկում: Սերմերի հատկությունը և նրա աղղեցությունը բերքի վրա:

Հասարակական աշխատանք: Յանքսի կամպանիայի նախապատրաստելը: Ծրագիր կազմել մասնակցել մեքենաների և գործիքների վերանորոգմանը: Ազնել կոլտնտեսությունների և խորհունտեսությունների ցանքսային պլանների իրագործմանը:

Յանեսի յեղանակները: Շարքացանի առավելությունները: Յանող մեքենաները: Սրանց աշխատանքի ուսումնասիրությունն ու գործադրումը:

Բույսի խնամքն անման ժամանակ: Աշնանացանի տափանումը: Հողի կեղերի վոչնչացումը, արտի հնձումը, ախտահանումը, վնասառուները, հիվանդությունները և պայքար նրանց դեմ: Քաղհանի նշանակությունը:

Հացահատիկների հավաքը. հավաքի ժամանակը և ձևերը: Սերմնային հավաքի առավելությունը ձեռքինի հանդեպ:

Կառելը: Կառելու մեքենաներ և սրանց գործադրումը: Միջին բերք, սերմի և գարմանի հարաբերակցությունը: Հատիկի պահելը, Հատիկի հիվանդությունները և պայքար նրանց դեմ:

Հասարակական - ոգտակար աշխատանք (բոլոր մշակույթների համար): Աշակցել խորհունտեսություններին և կոլտնտեսություններին բերքի հավաքման կամպանիայի անցկացման ժամանակ:

Յեղիպացուրեն: Յեղիպացուրենի տարածման վրանը Խորհրդային Միության մեջ և Վրաստանում: Յեղիպացուրենի մոլոֆուգիական առանձնահատկությունները: Յեղիպացուրենի տեսակները՝ վաղ, միջին և ուշ հասունացողներ, հողի մշակումը: Յեղիպ-

ացուրենի զարգացման հողային և կլիմայական անհրաժեշտ պայմանները: Շարքացան և խառնացան:

Յեղիպացուրենի ցանքսի մեքենաները և նրանց գործադրումը: Յանքսի ժամանակակից և խորհությունը: Յանքսի խնամքը: Միջջարքային տարածություն մշակումը: Կուլտիվատորների: Տրակտորների գործադրումն այդ գործում: Յեղիպացուրենի վնասառուները և հիվանդություններն ու պայքարը զբանց: Յեղիպացուրենի հավաքը: Հավաքի մեքենաներ և նրանց գործադրումը: Յեղիպացուրենի պահպանումը, սերմացուների ընտրությունը: Յեղիպացուրենի զտումը: Զտման մեքենաներ և նրանց գործադրումը: Յեղիպացուրենի գործածությունը:

Հասարակական աշխատանք: Մասնակցել խորհունտեսությունների և կոլտնտեսությունների յեղիպացուրենի ցանքսի կամպանիայի անցկացմանը, խնամքին և հավաքին: Մասնակցել գործադրային սիստեմի անցկացմանը, աշխատանքի ճշշտ կազմակերպմանը:

Վարսակի, հաճարի, գարու, կորեկի (զոմի) և այլնի զարգացման կլիմայական և հողային անհրաժեշտ պայմանները:

Յանեսանելը: Սրա հատկությունը: Սերմի պատրաստումը ցանքսի համար, ժամանակը, նորման, ցանքսի յեղանակները: Բույսերի հարաբերությունը գուղի պարաբռացումը: Խնամքը աճման ժամանակ, հասունացումը և բերքի հավաքը: Առանձին բույսերի հիվանդությունները և վնասառուները: Պայքար սրանց դեմ:

ԽԱՂՈՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՅԵԼ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Խաղողաբուծության զարգացումը մեզնում

Խաղողաբուծության պատմական տեսություն: Մանր խաղողաբուծության բացասական կողմերը: Խաղողաբուծության հնգամյա պլանը և յերկրորդ հնգամյակի առաջադրությունները: Խոշոր մեքենացրած խաղողաբուծության շինարարություն կողմանական և խորհունտեսության հիման վրա: Կուսակցության և Խորհրդային իշխանության միջոցառումները խաղողաբուծության և դինեղգործության զարգացման առաջարկում: Խա-

Դողի և գինու աբտահանությունը և դրա նշանակությունը խաղողաբուծության զարգացման համար: Մեր ռայունի բնական պայմանները—կլիման, հողը և դրա տեսակները: Դրանց բնութագիրն ու նշանակությունը խաղողաբուծության զարգացման համար: Խաղողի վազի (գորթի) տարածման սահմանները:

Խաղողի վազի բուսաբանկան ուսումնափրուրյունը յիշ մեջում տարածված տեսակները

Խաղողի վազի զիսավոր մասերը—արմատ, բուն, թուփ, բողբոջ (կոկոն), ծաղիկ, փողկույզ, տերե, բեղիկներ: Պրանց անառոմիական և մորֆոլոգիական նկարագրությունը: Գինու և ուտելու խաղողի տեսակները: Մեզնում տարածված զիսավոր տեսակները՝ սափերավի, ոքածիթելի, մնվանե, ցիցկա, ցոլիկուրի, կրախունի, ալեքսանդրենիլի և այլն (խարջի, ասկյարի, հաչարաշ, քիշմիշի, յեղանդարա և այլն): Դրանց բնութագիրը և ուսումնասիրությունը: Մելեկցիա և դրա նշանակությունը խաղողաբուծության մեջ: Խներատիվ և վեղետատիվ սելեկցիա: Վեղետատիվ սելեկցիայի բացառիկ նշանակությունը խաղողաբուծության զարգացման տվյալ ստադիայում:

Խաղողի այզի գցելը

Խոշոր կոլտնտեսային և խորհանտեսային խաղողի այզի գցելու (անկելու) տեղամասի ընտրությունը: Տեղամասի տեղն ու դիրքը և դրա նշանակությունը: Տեղամասի պլանավորումը (նոր ձևով) և նրա պատրաստելը պլանտաժի համար: Պլանտաժնայած հողային և կլիմայական այլազան պայմաններին:

Գութաններ և ուժեղ տրակտորներ հողի խորը մշակման համար: Դրանց բնութագիրը, նկարագրությունը և գործադրությունը: Պատվաստ և դրա նշանակությունը: Պատվաստման ձևերը: Զեռքի և մեքենայի պատվաստ: Ամերիկական վազի զիսավոր պատվաստելի ճյուղեր (շիվեր) և նրանց ընտրությունը նայած կլիմայական և հողային պայմաններին: Պատվաստելի նյութերի հավաք: Դրանց պահպանումն ու պատրաստումը պատվաստի համար: Շիվերի ընտրություն: Դրանց պահպանումն ու պատրաստումը

պատվաստի համար: Պատվաստների բուացնելը հասարակ և ստրատիֆիկացիոն յեղանակով: Դրանց համեմատությունն ու բնութագիրը: Տնկարաններ գցելն ու աշխատանքը գրանց մեջ: Խաղողի այգու համար մշակած տեղամասի պլանավորումը: Շարքերի ուղղությունը: Շարքերի միջի տարածությունը մեքենացրած այդիներում: Վազերի միջի տարածությունը շարքերի մեջ՝ նայած հողային և կլիմայական պայմաններին:

Պլանավորման ձևերը՝ շարքային, քառակուսի, շախմատաձև: Դրանց գրական և բացասական կողմերը սոցիալիստական խաղողաբուծության պայմաններում: Դրանց պլանավորման յեղանակը և արմատացած ու չարմատացած պատվաստներ տնկելը:

Հասարակական աշխատանք. — Ոգնել խաղողի այգու համար տեղամասի ընտրության ու պլանավորմանը: Կազմել միանվագ և պարբերաբար աշխատանքների ու անհրաժեշտ գործիքների և մեքենաների պլան: Ոգնել տեսակների ընտրության ու տնկարկությանը:

Խաղողի այգու խնամելը

